

ԶԱՐԹՈՆԿ -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝

www.zartonkdaily.com

ինչպէս նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN
77րդ Տարի, թիւ 172 (21,131) **ՌԻՔԱԹ**, 15 ՕԳՈՍՏՈՍ 2014 4 էջ 1000 L.O.

زارتونك جريدة سياسية أرمنية

**ՄԱՍԼՈՑ
ԱՐՁԱԿՈՒՐԴ**

Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով եւ համաշայն մամլոյ սենտիքայի որոշումին, «Չարթօնք» պիտի ունենայ միօրեայ արչակազմով:

Մեր յաջորդ թիւը կ'իրակի, 17 Օգոստոսի առաւօտեան:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՄՏԱՑԱԲ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

Վարչապետ Թամամ Սալամ վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Տեյվիտ Դեյլը եւ քննարկեց բանակին յանձնուելիք օժանդակութիւնները: Զանդիպման նաեւ մասնակցեցաւ պաշտպանութեան նախարար Սամիր Մուշալէլը: Սալամ յայտնեց, թէ Լիբանան կ'ողջունէ բանակին համար որեւէ օժանդակութիւն: Դեսպանը Սալամին խոստացաւ անմիջական օժանդակութիւններ հայթայթել լիբանանեան բանակին: Լրատուական աղբիւրներ հաղորդեցին, թէ բանակը արդէն իսկ ստացած է ամերիկեան օժանդակութիւններու առաջին մասը:

Լիբանանեան կառավարութիւնը երէկ առաւօտեան վարչապետարանին մէջ գումարեց ընթացիկ կիստ մը, վարչապետ Թամամ Սալամի զխաւորութեամբ: Կառավարութիւնը հաւանութիւն տուաւ Մեւտուական Արաբիոյ կողմէ լիբանանեան բանա-



կին յատկացուցած մէկ միլիարդ տոլար օժանդակութեան: Գումարը պիտի դրոյս կտրուի Լիբանանի դրամատան մէջ, զայն օգտագործելու միայն յարմարագոյն նպատակներու համար: Խորհրդարանական հարցերու պետական նախարար Մուհամմէտ Ֆընէշ ողջունեց բանակին համար կատարուող օժանդակութիւնները: Կառավարութիւնը ընդհանուր գիծերու մէջ քննարկեց զինեալ կազմակերպութիւններու մօտ առեւանգուած կամ պատանդ վերցուած զինուորականներուն հարցը: Կառավարութիւնը նաեւ քննարկեց Իրաքի զինուորականներուն իրավիճակը եւ միջազգային ընտանիքէն պահանջեց անմիջական քայլերով երաշխաւորել անոնց անվտանգութիւնը: Կառավարութիւնը զօրակցութիւն յայտնեց պետական քննութիւններու մասնակցող աշակերտներուն վկայագիր փոխանցելու կորթական նախարարի որոշումին:

Մուսթաքալ Դոսանքի աղբիւրներ յայտնեցին, թէ Սաադ Յարիրի պիտի վերադառնայ Պելլուր, սակայն անոր վերադարձին թուականը ցարդ կը մնայ անորոշ: Լրատուական աղբիւրներու համաձայն, Սաադ Յարիրի Պելլուր վերադառնալէ ետք այցելութիւն մը պիտի տայ Ռապիէ եւ հանդիպում մը պիտի ունենայ Միշէլ Աունի հետ: Սակայն քաղաքական մեկնարկներու կարծիքով, ինչորոշ առարկայ հանդիպումը կրնայ ուշանալ, նոյնիսկ Յարիրի վերադարձէն ետք:

Լիբանանեան բանակի ընդհանուր իրամասնատար զօրավար Ժան Զահուաճի յայտարարեց, թէ Արսէլ վերադարձաւ օրինականութեան գիրկը: Այս առիթով, ան յայտնեց, թէ կորսուած կամ առեւանգուած բանակայիններուն թիւը կը հաշուէ քսան: Զահուաճի մտահոգութիւն յայտնեց կորսուած բանակայիններուն ճակատագիրին գծով: Ներքին գործոց նախարար Նուհատ Մաշուրը յայտնեց, թէ կրօնաւորներու եւ անհաշիկներուն միջեւ բանակցութիւնները ժամանակի կը կարօտին: Նախարարը նշեց, թէ կորսուած բանակայիններուն հարցը կը քննարկուի համաշխարհային մակարդակով: Ընդհանուր անվտանգութեան ընդհանուր տնօրէն հազարապետ Ապպաս Իպարհիմ պատրաստակամութիւն յայտնեց մասնակցելու բանակայինները ազատ արձակելու բանակցութիւններուն: Ան նշեց, թէ անորոշութիւն կը տիրէ ահաբեկիչներուն ներկայացուցած պայմաններուն շուրջ: Լրատուական աղբիւրներ հաղորդեցին, որ Ապու Դասան անունը կրող պարտականաւոր խմբակներուն մը պատանդ վերցուցած է բանակայինները եւ ազատ արձակելու համար կը պահանջէ, որ կառավարութիւնը ազատ արձակէ իր կազմակերպութեան անդամ տասը բանտարկեալներ:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- Զնգալլայի ընդհանուր քարտուղար Դասան Նասրալլա այսօր երեկոյեան խօսք մը պիտի արտասանէ Զուլիսեան պատերազմի տարեդարձին առիթով: Նասրալլա պիտի քննարկէ տեղական եւ շրջանային բեմի վերջին զարգացումները:
- Երեսփոխան Սամիր Ընսր յայտնեց, թէ Մուսթաքալ Դոսանը կը մերժէ խորհրդարանի պաշտօնակառուցութեան երկարածուցը: Մուսթաքալ Դոսանքի համար առաջնայնութիւնը նախագահի ընտրութիւնն է: Ընսր ըսաւ, որ խորհրդարանին պաշտօնակառուցութեան երկարածուցը հաւաքական պատասխանատուութիւն մըն է, որմէ անհրաժեշտ է խուսափիլ:
- Կառավարութեան մօտ զինուորական ատեսնի դատախազ Սաքր Սաքր, 43 տարեկաններ հարցաքննելէ ետք, զանոնք փոխանցեց զինուորական հետաքննութեան: Ենթակետերը, որոնց մէջ ոմն՝ Իմեդ ժըմաս, կ'ամբաստանուին ահաբեկչական տարրեր կազմակերպութիւններու անդամակցութեամբ:
- Սենտիքայական համակարգումի խորհուրդի անդամ Դանիա Ղարիպ զիտել տուաւ, թէ քաղաքական ուժեր կը փորձեն ճեղքել յառաջացելու համակարգումի խորհուրդին մէջ: Ան ըսաւ, որ ուսումնական պիտի չբարագրեն պետական քննութիւնները, միևնրէ իրենց պահանջներուն որդեգրումը: Կրթական նախարար Իլիաս Պուսասապ յայտարարեց, թէ ժամանակը կը սպառի եւ չի կրնար անկախ ձգել սրբապատեան հարցը, որովհետեւ հազարաւոր աշակերտներ կը սպասեն քննութիւններու արդիւնքին:

ԻՐԱԿԻ ՔՐԻՐՏԵՐՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՐԵՆՆԱՅ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանք Րուլթըրը Զթայմայեր պատրաստակամութիւն յայտնեց՝ անհրաժեշտութեան պարագային ռազմական օժանդակութիւն հայթայթելու Իրաքի քիւրտներուն: Միւս կողմէ Միսան Լահանգի զինուորներու համայնքի պետ Տաւիէլ Թումա, Տաւշի գօտիներուն մէջ հալածանքի ենթարկուող փոքրամասնութիւններուն օգնութեամբ լքել իրենց բնակարանները եւ գաղթել Իրաքի հարաւային շրջանները:

Բրիտանիոյ վարչապետ Տեյվիտ Քամերոն մտք ապագայ մը նախատեսեց Իրաքի փոքրամասնութիւններուն: Գամերոն յայտ-



նեց, թէ ներկայ հակագրունին միայն մարդասիրական օժանդակութիւն պիտի տրամադրէ փոքրամասնութիւններուն: Ամերիկեան անմարդ օդանւեր ռմբակոծեցին հիւսիսային Իրաքի մէջ գտնուող Տաւշի դիրքերը: Զակառակ այս օդարշաւներուն, Տաւշի գիծերը կը շարունակեն յառաջանալ Արաբիոյ ուղղութեամբ:

Քաղաքական գետնի վրայ Իրան հերքեց Իրաքի նոր վարչապետին հարցով՝ Ռաշիդիճըքի հետ բանակցութիւններու մասին տեղեկութիւնները:

ՌԻՔԵՆԿԹԸՆ ԱՆՅԱՒԱՍԱՐ ՊԱՅՔԱՐ ԳՆԱԳՆԱԿԱՆԸ ԿՈՒ ՏԱՅ ԹՈՒՐԵԻՈՅ ՆԱԽԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան խօսակարար օգնական Մեթի Դարֆ անդադարձաւ Թուրքիոյ նախագահական ընտրութիւններուն:

Յոյն կատարելով այդ մասին ԵԱԿԿ զեկոյցին ան հաստատեց, որ թեկնածուներուն համար չէր ապահովուած մրցակցութեան հաւասար պայմաններ:

Դարֆ նշեց, որ Երտողան, ըլլալով կառավարութեան ղեկավար՝ օգտագործած էր իր տրամադրութեան տակ եղած վարչական լծակները եւ յաջողած էր առաւելութիւն ձեռք բերել միւս թեկնածուներուն դիմաց:



Դարֆ ուղղակի պատասխան մը չտուաւ այն հարցումին, թէ կարելի՞ է Թուրքիոյ ընտրութիւնները ազատ, արդար եւ թափանցիկ որակել:

Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլ կազմակերպեց հրաժեշտի իր առաջին ընդունելութիւնը, որուն մասնակցեցան գրեթէ բոլոր քաղաքական կարգադրուող ղեմերը, բացի զԼիպալուր ընդդիմադիր՝ Դանարպետական Ժողովրդային Կուսակցութեան պետ Եւմալ Եւրըճ-տարօղլուէն, որ յայտնեց, թէ «բազմազբաղ» ըլլալով պիտի չմասնակցի ընդունելութեան:

Կիլ շնորհաւորեց Երտողանը ու շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրեն զօրակցած են, ապա պնդեց. «Թուրքիա այսօր ժողովրդավարական գետնի վրայ իր թերութիւնները մեծ մասամբ լուծած էր կիր թէ հասած ենք ժողովրդավարութեան որոշ հասունութեան: Բնաւ կասկած չունիմ, որ Թուրքիա կարելու իր տեղը պիտի ունենայ 21-րդ դարուն»:

Ընդունելութեան ընթացքին լրագրողներու հետ զրուցեց ընտրեալ նախագահ, վարչապետ Երտողան, որ դիտել տուաւ, թէ Կիլին՝ իշխող կուսակցութեան վերադառնալու քայլը «բնական» է:

Վարչապետը անցրցուց. «Ամսուն 27-ին, մեր կուսակցութեան արտակարգ համագումարը պիտի կայանայ»:

Միևնրէ յառաջիկայ մեծ համագումար, կուսակցութեան շարքերէն ներս փոփոխութիւններ պիտի չկատարուին ու միայն կուսակցապետը պիտի փոխուի»:

Միւս կողմէ Տիգրասկերտի փաստաբանական կանոնի անդամներն Մասուլի Քարաման, Թուրքիոյ իշխանութեանը դիմում կատարած է պահանջելով, որ Տիգրասկերտէն մեկնող կամ դէպի հոն վայրէջք կատարող օդանւերուն մէջ, սպասարկութեան ու այլ գիտելիքներու առնչութեամբ ուղեւորներուն տրուած բացատրութիւնները, բացի թղթերէն տրուին նաեւ քրտներունով:

Քարաման ըսած է, որ այս ուղղութեամբ դատ պիտի բանայ թէ՛ ղիմումը մերժուի՝ ներկայի դրութեան մարդկային իրաւունքներու ոտնակոխումը նկատելով:

ԵԱԿԿ ՅԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ԿԱՄԱՆԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՏԱՅԵՒԵՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

ԵԱԿԿ Միւսքի խմբակի համանախագահները մտադիր են մօտիկ ապագային դարձեալ այցելել տարածաշրջան, բայց այցելութեան թուականը կը մնայ անորոշ: Այս մասին յայտնեց ամերիկացի համանախագահ Ժէյմս Րուրլիք, պատասխանելով ազգայնական «Է.Փի.Էյ.» լրագրողի հարցումին:



«Մոյճի մէջ տեղի ունեցած քննարկումները շարունակելու համար եւ հակամարտութեան խաղաղ կարգաւորման գծով բանակցութիւնները առաջ տանելու նպատակով, նախագահները կրնան աշխատանքները իրականացնելու պատրաստ են աշակցելու բանակցութիւններուն մէջ յառաջնադաս պահուցելու ջանքերուն: Դայ եւ ազգայնական ժողովուրդները եւս պէտք է հասկնան, որ շարունակուող հակամարտութիւնը իրենց պետութիւններուն համար օգտակար չէ: Յոյս ունիմ, որ մարդիկ կողմ են խաղաղութեան», անցրցուց Րուրլիք:

ԹՈՒՐԵԻԱ ԿԸ ՎԵՐԱՅԱՍՏԱՏԵ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՏ ԱՄՅԱՆԸ ՓԱԿ ՊԱՅՔԵՆՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թուրքիա պաշտօնական մակարդակով կը շարունակէ յայտարարել Դայաստանի հետ սահմանը փակ պահելու մտադրութեան մասին:

Արդարեւ, Թուրքիոյ նախագահի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Կիլրօն Թիւրօղլու, ազգայնականական «Էյ.Փի.Էյ.» լրատուամիջոցին յայտնեց, որ անհիմն են թրքական մամուլին մէջ շրջող այն լուրերը, թէ հայ-թրքական սահմանը Սեպտեմբերին կրնայ բացուիլ:

«Կիլ տեղեկատուութիւնը որեւէ հիմք չունի: Իկտիլըն միևնրէ Դայաստանի հետ սահմանին վրայ գտնուող Ալիճանի սահմանային անցակետ տանող ճանապարհներու կուրպպաւաումը կը կատարուի ոչ թէ սահմանի բացման, այլ այդ շրջանի բնակիչներու տեղափոխութեան յարմար պայմաններ ստեղծելու համար», յայտարարեց Թիւրօղլու:

ԱՉՐՊԵՅՃԱՆԻ ԲԱՆԱԿԸ ՄԱՅՐԱԿԱՆ ԳՈՐԳՈՒՐԱՆՔԻ ՏԱԿ

«Սօտն կը հետեւի Ազրպեյճանի եւ Դայաստանի միջեւ տեղի ունեցող ղեպքերուն», «Էյ.Փի.Էյ.» լրատու գործակալութեան ըսաւ Թուրքիոյ զինուորական ուժերու սպայակոյտի պետ Նեճետբէ Եօզել, ըստ «Ազատութիւն» կայանին:

«Մեր սիրտը կը ցաւի ազրպեյճանական բանակի զոհուած զինուորներուն համար: Ես կ'արթոյն մեր նահապետներու հոգիներու հանգստութեան համար: Մեր «Կիլիսիան» ռազմաբժշկական ակադեմիան ուղարկուած վիրաւորները բժշկներու մնալուն հսկողութեան տակ են: Մենք ըստ անհրաժեշտութեան կը խորհրդակցինք Ազրպեյճանի պաշտպանութեան նախարարին հետ», անցրցուց Եէլ:

ԱՉՐՊԵՅՃԱՆԻ ԲԱՆԱԿԸ ԿՈՒ ԿԱՏԱՐԵՒ ՕԴԱՅԻՆ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ

Ազրպեյճանի օդուժի եւ հակաօդային պաշտպանութեան զօրքերը զօրավարութիւններ կը կատարեն: Այս մասին հաղորդեց երկրի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ ծառայութիւնը:



Ռազմափորձերը տեղի կ'ունենան պաշտպանութեան նախարար Չաքիր Դասաւոյի կողմէ ստորագրուած «2014-ի մարտական պատրաստութեան ծրագիր»-ին համաձայն եւ անոնց ընթացքին կը մշակուին՝ զօրքերը մարտական պատրաստութեան բարձր աստիճանի բերելու, պետական ու ռազմական կարեւոր դիրքերու պաշտպանութեան, ինչպէս նաեւ ցամաքային զօրքերու յարձակողական գործողութիւններու քօղարկման մեթոտիկաները»:

Չօրավարութիւններուն մաս կը կազմեն կարծ եւ հեռահար իրթիւններ:

Նե ր ք ամ ք ամ ք ամ ք

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՔԵՂ ՀԱՐՈՒԱԾԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՅՐԻԿԱՆ

Հայկական բանակի ղեկավարությունը յայտարարել է, որ վերջին օրերին հայկական կողմը ոչ միայն պատասխանել է հակառակորդին, այլև իրականացրել է կանխարգելիչ հարձակումներ այն կետերում, որտեղ հակառակորդը ակտիվություն է ցուցաբերել: Բացի այդ իրականացրել են ռազմական տեսակետի գրագետ օպերացիաներ, երբ հակառակորդին «սաղրել» են գործողություններ է վերահսկողություն տակ են վերցրել կարենու դիրքեր:

Շատերն են այն կարծիքին, որ սահմանային լարուածութեան նպատակը խաղաղարարների մուտքն է: Ռուսական մամուլում ազդեցիկ նախկին ակտիվիստը գուցա հեռու հրապարակում էին յօդուածներ, որոնցում բացառապէս նշուում է, որ միայն Մոսկուան կարող է կանգնեցնել լարուածութիւնը, եւ որ անհրաժեշտ է ռուսական զօրք մտցնել Ղարաբաղ:

Մինչ լարուածութեան այս ալիքը, Ռուսաստանն առաջարկել էր «խաղաղարարների» մուտքը, որին կտրուկ հակադարձել էր ՀՀ պաշտպանութեան նախարարը յայտարարելով, որ Հայաստանի գիտած ուժերը վերահսկում են իրավիճակը եւ որեւէ խաղաղարար միջնորդութեան կարիք չկայ: Դրանից անմիջապէս յետոյ յայտարարութիւն էր տարածել տարածաշրջանում իր ազդեցութիւնը վերականգնող Իրանը յայտարարելով, որ ղեմ են ցանկացած խաղաղարար ուժերի ներկայութեանը, քանի որ դրանք սպառնալու են ողջ տարածաշրջանին: Իրանը փաստացի աջակցութիւն էր յայտնել Հայաստանի դիրքորոշմանը:

Շատ անժամանակ Մոսկուան եւ Պաքուն փորձել են հասկանալ, թէ որքանով Հայաստանը «չունի խաղաղարարների կարիք»: Հայկական բանակը սակայն պատուով դուրս եկաւ այս փորձութիւնից եւ ապացուցեց, որ ի վիճակի է խաղաղութիւն հարկադրել տարածաշրջանում:

Մոսկուայում սակայն չեն հրաժարուել իրենց ծրագրերից եւ Սոչի են հրապարակել Հայաստանի ու Ազրբայճանի նախագահներին: Մինչ այդ նման նախաձեռնութիւն էր ցուցաբերել Փարիզը, սակայն Մոսկուան «խլեց» նախաձեռնութիւնը, ցանկանալով ցոյց տալ, որ ինքն է իրադրութեան տերը:

Ռուսաստանի նման մի նախաձեռնութիւն, արդէն տապալել է, երբ նախագահ Մետվելտեմ ստանձնել էր կարգաւորման նոր «ձեռնարկ»՝ եռակողմ հանդիպումները նախագահների մակարդակով: Ներկայում կրկին փորձ է արւում վերականգնել այս «ձեռնարկը»՝ խաղից դուրս թողնելով Միւսկի խմբին եւ հաստատելով Ռուսաստանի «մեռած աշտորի»:

Սակայն իրավիճակն այնքան էլ միանշանակ չէ: Նախ, առայժմ յայտնի չէ, թէ նախագահների հանդիպումն ինչ ձեռնարկով է լինելու՝ արդեօք լինելու է եռակողմ հանդիպում: ՌԻ ԹԳ նախարար Լաւրովը յայտարարել է, որ Փուլինն առանձին-առանձին հանդիպելու է նախագահների հետ եւ փորձելու է հանդիպեցնել նրանց: Լաւրովը սակայն այնքան էլ լաւատես չէ ինչ որ համաձայնութեան հասնելու հարցում:

Այս ֆոնին, հետաքրքիր էր տարածուած մի հաղորդագրութիւն, որը պաշտօնապէս վերահարուած էր «ՀՀ պաշտպանութեան նախարարութեան եւ ՀՀում ԱՄՆ դեսպանութեան համատեղ մամուլի հաղորդագրութիւնը»: Սա փոքր ինչ տարօրինակ «ձեռնարկ» է, որն իր հերթին վկայում է, որ հայկական բանակի վերջին օրերի գործողութիւնները արտաքին քաղաքական միւս շահագրգիռ կողմերի համար եւս անարժանազան չեն մնացել:

Միով բանին հայկական բանակը պատուով դուրս եկաւ այս փորձութիւնից եւ ապացուցեց, որ մեզ խաղաղարարներ պետք չեն: Խաղաղարար ուժերի մուտքը՝ լինեն ռուսական, թէ արեւմտեան, նշանակում է Ղարաբաղի բաժանումը, որը ծանր հարուած է լինելու հայկական շահերին:

Միւս կողմից բանակի յստակ ռազմա-քաղաքական գործողութիւնների շնորհիւ «հայկական գործօնը» կարծես թէ վերածուում է: Հայաստանում բոլորի համար երեւի թէ արդէն պարզ է դառնում, որ երբ որեւէ հանրութիւն յայտարարում է եւ ապացուցում, որ ընդունակ է ինքնուրոյն պաշտպանելու իր շահերը եւ ոչ միայն անվտանգութիւն սպառող է, այլև անվտանգութիւն կառուցող, բոլորը գալիս ու կանգնում են նրա կողքին:

Իրանն ու ԱՄՆն արդէն նման քայլ կատարել են, եւ հեռու չէ այն ժամանակը, երբ Ռուսաստանն էլ է կանգնելու այդ դիրքերում: Դրա համար պետք է յստակ ու անզիջում կանգնել սեփական շահերի պաշտպանութեան դիրքերում եւ աշխարհի հետ խօսել միմիայն այդ դիրքերից:

Հայկական միջավայրում ներկայում ոգեւորութիւն է, հայրենասիրական վերելք, եւ դա հասկանալի է հանրային-պետական ընդհանուր ծախսողումների ֆոնին: Սակայն այդ ոգեւորութիւնը պետք է վերածուի կոնկրետ գործողութիւնների ու քայլերի, քանի որ լարուածութեան յաջորդ փուլերի որակն ու մակարդակն այլ են լինելու: Դրանք պետք է լրջօրէն պատրաստուել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՌՌ ՍԿՁՐՈՒՆԵՐՆԵՐ ՄԵՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԵՒ ...ՄԻՒՍՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ՈՌՊԵՐ ԱՅՏԱՊԻՐԵԱՆ

Ստորեւ այն փաստաթուղթը, գոր դրկեր էի Վազգէն Սարգսսեանին, անոր վարչապետ նշանակուելէն ետք՝ 1999 Յունիս 11ին: Չայն վերագտած ըլլալով անձնական արխիւներու մէջ՝ կը հրաձգեմ հանրային ընթերցումի, քանի որ ինձի այնպէս կը թուի, թէ քննադիր բովանդակութիւնը բոլորովին այժմեական կը մնայ: Անիկա կրնայ որպէս չափանիշ ծառայել որքա՛ն մեր ղեկավարներուն, նոյնքա՛ն ալ իր երկրին եւ ազգին ապագայով մտահոգ իւրաքանչիւր հայու: Մարդոց եւ հաւաքականութիւններու կեանքը լեցուն է դժուարութիւններով, գորք պետք է շրջանցել գիտնալ: Սակայն միայն որոշ արժեքներու յարգանքով կարելի է պահպանել ճիշդ ուղղութիւնը, ցոյց տալ որոշ յարակցութիւն եւ արդիւնք ձեռք ձգել: Իմաստաւորել սեփական գոյութիւնը եւ ուրիշներունը. ահաւասիկ Վազգէն սպարապետի երողումը: Հայաստանի եւ Արցախի ազգային հերոսը խոստացած էր հետեւիլ այս սկզբունքներուն: Եւ անկասկած՝ պիտի հետեւեր, եթէ չսպանուեր նոյն տարուան Յոկտեմբեր 27ին:



Ստորեւ այն փաստաթուղթը, գոր դրկեր էի Վազգէն Սարգսսեանին, անոր վարչապետ նշանակուելէն ետք՝ 1999 Յունիս 11ին: Չայն վերագտած ըլլալով անձնական արխիւներու մէջ՝ կը հրաձգեմ հանրային ընթերցումի, քանի որ ինձի այնպէս կը թուի, թէ քննադիր բովանդակութիւնը բոլորովին այժմեական կը մնայ: Անիկա կրնայ որպէս չափանիշ ծառայել որքա՛ն մեր ղեկավարներուն, նոյնքա՛ն ալ իր երկրին եւ ազգին ապագայով մտահոգ իւրաքանչիւր հայու: Մարդոց եւ հաւաքականութիւններու կեանքը լեցուն է դժուարութիւններով, գորք պետք է շրջանցել գիտնալ: Սակայն միայն որոշ արժեքներու յարգանքով կարելի է պահպանել ճիշդ ուղղութիւնը, ցոյց տալ որոշ յարակցութիւն եւ արդիւնք ձեռք ձգել: Իմաստաւորել սեփական գոյութիւնը եւ ուրիշներունը. ահաւասիկ Վազգէն սպարապետի երողումը: Հայաստանի եւ Արցախի ազգային հերոսը խոստացած էր հետեւիլ այս սկզբունքներուն: Եւ անկասկած՝ պիտի հետեւեր, եթէ չսպանուեր նոյն տարուան Յոկտեմբեր 27ին:

ՀԱՅՈՒՆ ՆՈՐ ԵՐՈՒՐԱԸ

Պիտի պաշտպանել հայկական մշակութային եւ լեզուական ժառանգութիւնը ամէն տեղ, ուր ան վտանգուած է: Պիտի քաջալերել անոր ուսուցումը, աշխարհով մէկ տարածումը եւ ներցուն պիտի կանգնի անոր զարգացման նպաստող մտաւորականներուն եւ արուեստագետներուն:

Պիտի պահպանել Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը եւ ապահովել անոր անկախութիւնը: Պիտի պաշտպանել Յեղասպանութեան ճանաչումը եւ Ղարաբաղի հայկական յատկորոշութիւնը՝ ընդդէմ ամէն տեսակի ժխտողականութեան եւ սակարկութեան փորձի:

Պիտի հսկել ժողովրդավարական կանոններու եւ մամուլի ազատութեան յարգանքին, յատկապէս՝ քաղաքական կարենոր իրադարձութիւններու ժամանակ: Կաշառակերութեան եւ ծանր յանցագործութեան դէմ անդադրում պայքար պիտի մղուի: Արդարադատութիւնը պիտի կիրարկուի ամենայն անաչառութեամբ:

Պիտի հաստատել Հայաստանի տնտեսական զարգացումը՝ երկիրի եւ Սփիւռքի հայոց մտաւոր կարողութիւններուն վրայ, ինչպէս նաեւ անոնց փոքր եւ միջին ձեռնարկութիւններ եւ արդիւնաբերութիւններ ստեղծելու եւ զարգացնելու կարողութիւններուն վրայ (յատկապէս՝ գիւղատնտեսական մթերքներու, համակարգչային ծրագրիչներու, զբօսաշրջութեան, հագուստեղէնի եւ բարձր արհեստագիտութիւններու ոլորտներուն մէջ):

Պիտի պահանջել արեւելի խիստ վերահսկողութիւն՝ մեռած շնորհներուն գանձատրական եւ հարկային գործողութիւններուն: Անոնք ենթակա պիտի ըլլան ազատ մրցակցութեան կանոններուն, աշխատանքի օրենսդրութեան, եւ պիտի խթանուին երկրին համար արեւելի շահաբեր արտադրութիւն կատարելու:

Պիտի պահանջել ժողովրդի ստուար խաչի ընկերային պայմաններու բարելաւումը՝ աշխատանքներու ստեղծման, արեւելի պատշաճ աշխատավարձերու եւ բժշկական դարմանումներու անդիմազարտելի ծախսերու նուազեցման միջոցով:

Վստահ պիտի ըլլամ, որ միջազգային մեծագոյն դերակատարներուն (Տնտեսութեան համաշխարհային կազմակերպութիւն՝ OMC, Տարադրամի միջազգային հիմնադրամ՝ FMI, Համաշխարհային դրամատուն՝ BM, միջազգային ընկերութիւններ, դրացի պետութիւններ...) հետ բանակցութիւնները լաւ նախապատրաստուած եւ սակարկուած ըլլան, յարի՛ր՝ միջազգային օրենքի եւ երկիրի ընդհանուր շահերուն:

Աստուածածին, Մեղա՛յ Քեզ...

(Շարունակուած Բ. Էջէն)

տատեղի դարձած է ո՛չ միայն լիբանանահայութեան, այլեւ՝ ամբողջ սփիւռքահայութեան համար: Ամէն տարի, խունեթրամ հաւատացեալներ կը բարձրանան վանքին բարձրունքները՝ Աստուածամոր ոգեղէն ներկայութեամբ վերանորոգելու համար իրենց ուխտը:

62 տարիներ այս մատուռը հաւատքի օճակ, յոյսի ներշնչանք, յոյսի փարոս, մարդկային արժեքներու դարբնոց, մեղաւորներու քարտէսն է փրկութեան պարիսպ դարձած է հայ ուխտաւորին համար:

Ահաւասիկ, այսօր դարձեալ հասած է ժամանակը՝ կրկին բարձրանալու Աստուածամոր սրբավայրը, ուր երկնային հաւատքի գորութեամբ Աստուածածինը երկինքէն երկիր պիտի իջել: Մեր անօթեւորուն գուլայ-գուլայ դէպի երկինք բարձրացում պիտի բարեհաճեցնէ Աստուածածինը՝ փութալու իր գաւակներուն, լսելու անոնց հոգիներուն կանչը եւ մայրական անհուն սիրով ու սրբութեամբ պաշտպանելու իր բոլոր գաւակները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի մականին շուրջ հաւաքուելու կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը: որպէսզի Սուրբ եւ Ամմահ Պատարագի ճամբով աստուածային երկնառաջ շնորհները ո՛չ միայն շրջապատեն, այլեւ հոգեզիննէն բազմաճիւղ ժողովուրդը:

Սիրելի ընթերցող, դուն ալ եղիր այդ ուխտապահ անձերն մէկը, բարձրացի՛ր վանք, ծունկի՛ եկուր քու հոգեկան աշխարհիդ մէջ, պահ մը մոռնալով աշխարհիկ մտահոգութիւնները: Տնարդը՝ Աստուածամոր սրբական պատկերին առջեւ, խոնարհեցուր հոգիդ եւ աղաչէ՛. «Ո՛վ Երկնային Սրբուհի, դուն՝ որ մայր ես. դուն՝ որ բարեխօս ես, նայէ այս հաւատացեալ ժողովուրդին. որ քեզի կը բարձրացնէ իր աղօթքները: Անպատասխան մի՛ ձգեր անոնց պաղատանքները, այլ քու մայրական սիրով ողողէ անոնց հոգիները: Քու խաղաղութիւնը շնորհէ աշխարհին՝ որպէս յաւիտենական խաղաղարար: Բժշկութիւն պարգեւէ բոլոր անոնց, որոնք քեզի կ'ապաւինին: Խոր հառաչանքով քեզի կը դիմենք ու կ'ըսենք՝ մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ՝ Աստուածածինիկ»:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆ

ԵՒ ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԱՅԻ

Սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնին եւ Պիքֆայայի Վանքի Ուխտի Օրուան առիթով, սիրով կը հրաւիրենք լիբանանահայութիւնը, Շաբաթ, 16 Օգոստոս 2014-ի երեկոյեան, մասնակից դառնալու Պիքֆայայի վանքի շրջափակին մէջ տեղի ունենալիք Հանդիսաւոր Սուրբ եւ Ամմահ Պատարագին:

Հանդիսաւոր այս առիթով, արարողութեանց պիտի նախագահէ եւ մեր ժողովուրդին իր Հայրական պատգամը փոխանցէ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

Պատարագի ընթացքին, պիտի կատարուի խաղողի եւ մատաղի օրհնութիւն:

Տօնական այս առիթով, դէպի Պիքֆայա մեր հաւատացեալ ժողովուրդին երթեւեկը դիւրացնելու նպատակով, մասնաւոր փոխադրակառքեր տրամադրելի պիտի ըլլան հետեւեալ վայրերուն մէջ. -

- Ս. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց
- Ս. Աստուածածին եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- Ֆանար՝ ականմբին առջեւ
- Ռաուտա (Ելիան)
- Ս. Սարգիս եկեղեցւոյ կից
- Չալքա ականմբին կից
- Անթիլիաս՝ Սիմիթեան շէնքեր
- Ս. Զատասնից Մանկանց եկեղեցի
- Հաճըն եւ Ռմելլ՝ նախկին Փուռ Փատովային կից

Փոխադրակառքերը վերոնշեալ վայրերէն պիտի մեկնին ճիշդ երեկոյեան ժամը 6:00-ին եւ Ս. Պատարագի ատարուելէն ժամ ետք՝ ժողովուրդը վերադարձնեն Պէրլուբ:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆ

ԵՒ ԽԱԿՂՈՂԻ ՕՐՀՈՒԹԻՐՆ

ՖԵյթրունի «ՍԱԹԷԼԻԹ» ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՐ ԺՐԺՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր եկեղեցւոյ ծխական ժողովուրդին եւ մասնաւոր այն հաւատացեալներուն որոնք բարձրացած եւ Ֆարայայի, Հարածիլի, Ֆեյթրունի, Աշուրի եւ Զարուանի շրջակայից հովոնցները, թէ Կիրակի 17 Օգոստոս 2014-ին Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով Սուրբ Պատարագ պիտի մատուցուի, ապա խաղողօրհնէի արարողութիւն պիտի կատարուի:

Վարողութեան պիտի հովանաւորէ եւ քարոզէ՝

ԳԵՐԱԸՆՈՐՅ ՏԵՐ

ՇԱՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՆՈՍԵԱՆ

Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի

Սկիզբ Ս. Պատարագի կատարման	ժամը 12:15
Քարոզ	ժամը 1:00
Խաղողօրհնէք	ժամը 1:30

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ Պատարագին եւ հաղորդուելու օրուան Սուրբ խորհուրդով:

ՏԱՍՕԹ

Անոնք որոնք կը փափաքին ըստ աւանդութեան խաղող ընծայաբերել, թող բարեհաճին մինչեւ ժամը 1:00 յանձնել խաղողները եկեղեցւոյ դրան մօտ հիւրընկալող տիկնանց յանձնախումբին եւ կամ թաղական խորհուրդի անդամներուն, իսկ Սաթէլիթ համալիրի մէջ բնակիչներուն համար դիմել Պրն. Կարօ Զաիբեճեանին, հեռ 09/888400 ներքին թիւ 3776, կամ 03/620167:

Իսկ անոնք որոնք փափաքը ունին իրենց սիրեցեալ նսեցեալներուն համար ՏԵՐ Ողորմիա խնդրել, պարտին մինչեւ ժամը 11:30 ներկայ գտնուիլ եկեղեցի եւ արձանագրել նսեցեալներուն անունները:

Թաղական Խորհուրդ
Ծիւնիկ, Անթիլիասի, Չալքայի եւ շրջակայից
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ

Our new website has been launched!
Visit us on www.ragmamoul.net
Այցելելցէ՛ք «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»-ի Նոր Կայքէջը

Our e-mail addresses are:

zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com

website:
www.zartonkdaily.com

Մարզական

ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏ ՇԱՅԵՑԱԲ ԳԵՐՄԱՆԻՈՅ «ՍՈՒՓԸՐ ԳԱՓ»Ը

Պորուսիա Տորթմունտ յաղթանակով սկսաւ Գերմանիոյ 2014-25 մարզական տարեշրջանը, երբ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց ախոյեանութեան տիտղոսակիր Պայերն Միւնխիլը եւ շահեցաւ Գերմանիոյ առաջնական «Սուփըր Գափ»ը:

Պայերնի կազմէն Տորթմունտէն կորսեցաւ յարձակող Ռոպերթ Լեվանտովսկի կատարեց առաջին պաշտօնական մրցումը: Յետոյ Միւնխիլը եւ Ֆրեյն էսթրիք Օպամէյանկ նշանա-



կեցին Տորթմունտի կողմը: Կարժէ նշել, որ անցնող տարեշրջանի սեմին, Տորթմունտ դարձեալ պարտութեան մատնած էր Պայերն Միւնխիլը՝ 4-2 արդիւնքով եւ շահած «Սուփըր Գափ»ը:

Պայերն Միւնխիլի կազմէն վնասուածքի պատճառով կը բացակայէին Արիան Բոպէլը եւ Ֆրանք Ռիպերին: Վերջիններս նաեւ հրաժեշտ տուին միջազգային ֆուլբոլին:

Ամրան ընթացքին, Պորուսիա Տորթմունտի կազմին միացան Ճի Տոնկ Ուոնը՝ Օկսպուրկէն, Ատրիան Ռամսը՝ Յերթա Պերլի-էն եւ Սիրո Իմպիլէն՝ Թորինյէն:

Պայերն Միւնխիլ՝ իր կազմը համարեց Ռոպերթ Լեվանտովսկիի՝ Պորուսիա Տորթմունտէն, Կուստա Պերնաթ՝ Վալենտին-սայէն, Փեփէ Ռէյնա՝ Լիվըրպոլէն: Միւս կողմէ, Թոնի Զրուզ միացաւ Ռեալ Մատրիտին, Մարիո Մանսուէրիջ՝ Աթլէթիքո Մատրիտին:

ՇԱՐՔԻԱԿԱՆ ԵՐՈՂՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՖՈՒՊՈՒԼԻ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԾՈՎ ԿԱՐԵՒՐ ԶԱՆԴԻՊՈՒՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

ՇԱՐՔ, 16 ՕԳՈՍՏՈՍ 2014

ԱՆԳԼԻԱ - Փըրքսիլը Լիկ
 Մանչեսթըր Եունայթըդ - Սուանսի Սիթի՝ ժամը՝ 14.45
 Լեսթըր Սիթի - Էվըրթըն ժամը՝ 17.00
 Քուինզ Գառը Ռեյնոլդզ - Յուլ Սիթի ժամը՝ 17.00
 Սթըք Սիթի - Ասթըն Վիլա ժամը՝ 17.00
 Ուեսթ Պրոմիսիզ Ալպիոն - Սանտերլանտ ժամը՝ 17.00
 Ուեսթ Համ Եունայթըդ - Թորթինհամ ժամը՝ 17.00
 Արսենալ - Գրիսթալ Փալաւս ժամը՝ 19.30
ՖՐԱՆՍԱ - ԼիԿ 1
 Փարի Սեն Ժերմէն - Պարիս ժամը՝ 18.00
 Մեց - Նանթ ժամը՝ 21.00
 Թուլուզ - Լիոն ժամը՝ 21.00
ՀՈՒՍՏԱ - ԵՐԵՏԻՎԻՉ
 Փի.Էս. Վի. Այնտրոպ - Պրետա ժամը՝ 19.30
 Է.Ֆ.Սէ. Թուլուզ - Տեն Հաակ ժամը՝ 20.45

ԿԻՐԱԿԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ 2014

ԱՆԳԼԻԱ - Փըրքսիլը Լիկ
 Լիվըրպոլ - Սաութհեմթըն ժամը՝ 15.30
 Նիուքասլ Եունայթըդ - Մանչեսթըր Սիթի ժամը՝ 18.00
ՖՐԱՆՍԱ - ԼԻԿ 1
 Մարսեյ - Մոնպելիե ժամը՝ 15.00
 Սեն Թեթիէն - Ռիմ ժամը՝ 18.00
 Պորտո - Մոնաքո ժամը՝ 22.00
ՀՈՒՍՏԱ - ԵՐԵՏԻՎԻՉ
 Էյ.Չէթ. Ալքմաար - Այաքս ժամը՝ 13.30

ԵՐԿՈՒՆԵՐԹԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ

ԱՆԳԼԻԱ - Փըրքսիլը Լիկ
 Պըրլի - Չելսի ժամը՝ 22.00


ԴՊՐԵՎԱՆԵ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԵԱՆ
ԴՊՐԵՎԱՆԵԻ 85-ՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ՆՈՐ ՄԱՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 2014-2015 կրթական տարեշրջանի կրթական արձանագրութիւնը արդէն սկսած է:

Դպրեվանք կ'ընդունուին նախակրթարանի 6-րդ դասարանը աւարտած աշակերտներ, կամ աւելի բարձր դասարաններէ դիմում կատարող թեկնածուներ:

Անոնք որոնք կը փափաքին Դպրեվանքի ուսանող դառնալ, թող բարեհաճին կապուիլ Դպրեվանքի հսկիչներուն՝ Շտրիք Աբդ. Ազգեանին 71/723264 կամ Գաբրիէլ Աբդ. Շիրազեանին 76/175127:

ՏԵՏՉՈՒԹԻՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՈՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԴԱՍԱՆՍՈՒԿԱՆ ՇԱՐՔ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Կաթողիկոսարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի կազմակերպութեամբ, 11-15 Օգոստոս 2014-ին, ամէն առաւօտ ժամը 10-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի պիտի ունենայ հոգեւոր խորհրդածութեան պահ (քարոզախօսութիւն, շարականի երգեցողութիւն եւ սաղմոսերգութիւն), Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները մասնակից դառնալու խորհրդածական պահերուն, եւ վերանորոգելու հոգեւոր արժէքներով ու ապրումներով:

ԱՍՏՈՒԱԾԱՍՈՐ ԿԵԱՆԸՐ ՕՐԻՆԱԿ ԶԱՅ ՄՕՐ ԿԵՆՏԱՐԻՆ

- Երկուշաբթի 11 Օգոստոս**
 «ՅԻՍՈՒՄ ԿՈՇՈՒՄ ԻՆ ՅՐՈՒԹԻՒՆԸ»
 Հոգ. Տ. Վիգէ Աբդ. Տալլըճեան
- Երեքշաբթի 12 Օգոստոս**
 «ՅԻՍՈՒՄ ՇՆՈՒՄ, ՏԱՃԱՐ ԸՆԾԱՅՈՒՄԸ ԵՒ ԱՊԼԱՆՎԱԿԱՆ ԸՆԾԱՆԻՔԸ»
 Հոգ. Տ. Վահիճ Աբդ. Ղարախանեան
- Չորեքշաբթի 13 Օգոստոս**
 «ՅԻՍՈՒՄ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՆԱՏ ԽՈՒՄԵԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ»
 Հոգ. Տ. Վաչէ Աբդ. Պալլըճեան
- Հինգշաբթի 14 Օգոստոս**
 «ՅԻՍՈՒՄ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՐՈՒՄ, ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ, ԹԱՐԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴՐԱՆՍ ՎԱՆ»
 Հոգ. Տ. Պարոյր Աբդ. Շերենզեան
- Ուրբաթ 15 Օգոստոս**
 «ՅԻՍՈՒՄ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՏԸ ՄԻՆՉԵՒ ՄԱՅ ԻՐ ՈՐԴԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՏԱՐԻՄ ՀՅԵՏԻՈՐԸ»
 Հոգ. Տ. Նշան Աբդ. Լախոյեան

Կ Ա Ր Ե Ւ Ո Ր

Անոնք որոնք կը փափաքին մատաղցու ոչխար կամ խաղող նուրբի Ուիլիամ Օրուան առիթով, պէտք է ամենէն ուշը Ուրբաթ, 15 Օգոստոս 2014-ի կէսօրին, իրենց նուէրները յանձնեն Անթիլիասի կամ Պիքֆայայի Վանքը: Հեռ: Անթիլիաս 04-410001 – Պիքֆայա 04-983634:

Դասախօսական ձեռնարկներուն մասնակցիլ փափաքողներուն համար, փոխադրակառքեր տրամադրուած պիտի ըլլան ամէն առաւօտ ժամը 8.45-ին, Պուրճ Համուտի Ս. Աստուածածին եւ Սրբոց Վարդանանց եկեղեցիներու մուտքին, Տպարան Տոկիլեանի մօտ, Տորայի մայրուղիին վրայ գտնուող «Խուրի Հօմ Լայն» հաստատութեան մօտ եւ Անթիլիասի Մայրկայանի դիմաց:

Շաբաթ, 16 Օգոստոս 2014-ի Ուիլիամ Օրուան պատարագին համար, դէպի Պիքֆայա մեր ժողովուրդի զաւակներուն երթեւեկը դիրացնելու նպատակով, մասնաւոր փոխադրակառքեր տրամադրելի պիտի ըլլան հետեւեալ վայրերուն մէջ-

- Ս. Կարդանանց եկեղեցւոյ դիմաց
- Ս. Աստուածածին եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- Ֆանար՝ ալումբիս առջեւ
- Ռաուտա (Էիլան)
- Ս. Սարգիս եկեղեցւոյ կից
- Չալքա ալումբիս կից
- Անթիլիաս՝ Սիմիթեան շէքեր
- Ս. Քառասկից Մանկանց եկեղեցի
- Հաճըն եւ Ռմելլ՝ Նախկին Փուռ Փատովային կից

Փոխադրակառքերը վերունշէալ վայրերէն պիտի մեկնին երեկոյան 6:00-ին եւ Ս. Պատարագի աւարտէն կէս ժամ ետք՝ ժողովուրդը վերադարձնեն Պէյրուս:

ԱՅՍՕՐ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ 15 ՕԳՈՍՏՈՍ

- * 1096՝ սկսաւ առաջին Խաչակրաց արշաւանքը:
- * 1461՝ թուրք-օսմանները գրաւեցին Տրապիզոնի կայսրութեան մայրաքաղաք Տրապիզոնը:
- * 1534՝ Փարիզի մէջ ստեղծուեցաւ Յիսուսեաններու Կաթողիկէ Միութիւնը:
- * 1537՝ հիմնուեցաւ Փարակլեյի մայրաքաղաք Ատուսիլը:
- * 1771՝ ծնաւ սկոթլանդացի պատմաբան սըր Ռոլլըրը Սըրթըր (մահացաւ՝ 1832):
- * 1914՝ Փանամայի ջրանցքով անցաւ առաջին նաւը:
- * 1922՝ ծնաւ հայ բանաստեղծ Վահագն Դաթեանը (մահացաւ՝ 1996):
- * 1944՝ ծնաւ ծագումով հայ ֆրանսացի երգչուհի Սիլվի Կարդանը:
- * 1960՝ Գոնկո անկախութիւն հռչակեց Ֆրանսային:
- * 1969՝ սկսաւ Ուոսթըրի փառատօնը:

ՈՒՄՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ ԵՒ ՏՈՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուքով պիտի նշուի Ս. Աստուածածին Վերափոխման տօնը եւ կատարուի Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքին ուխտագնացութիւնը:

Այս առիթով, ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուիլիամ Օրուան ժամանակացոյցը.

- Ուրբաթ 15 Օգոստոս**
- * Աղի օրհնութիւն եւ ոչխարներու զենում, առաւօտեան ժամը 11.00-ին:
 - * Աջաւանդոյր, առաւօտեան ժամը 11.30-12.00:
 - * Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
 - * Հսկում, երեկոյեան ժամը 7.00-ին:
 - * Աջաւանդոյր, երեկոյեան ժամը 8.00-8.30:
 - * Երգահանդէս, երեկոյեան ժամը 8.30-ին:
- Շաբաթ 16 Օգոստոս**
- * Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 7.00-ին:
 - * Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
 - * Հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ, երեկոյեան ժամը 8.00-ին:

ՊԻՏԻ ԱՊԱՏԱՐԱԳԷ՝ ԳԵՐԸ. Տ. ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցէ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Յընթացք Սուրբ եւ Ամմահ Պատարագին, տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը օծումը պիտի կատարէ Նորակառոյց Նահատակաց Խորանին:

Կիրակի 17 Օգոստոս

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ:

ՊԻՏԻ ԱՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԲԱՐՈՒՆՎԵՐՑՆԵՐ ԳԵՐՊ. Տ. ԺԻՐԱՅՐ Ծ. ՎՐԹ. ԹԱՇԸՅԵԱՆ

Յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի տեղի պիտի ունենայ խաղողորինքի արարողութիւն:

Երկուշաբթի 18 Օգոստոս «Յիշատակ Մեռելոց»

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի պիտի ունենայ Ս. եւ Ամմահ Պատարագ ու հոգեհանգիստ ազգիս համորէն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

Մ Ա Շ Ա Ջ Դ

Լիբանանի Հայոց թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը եւ Ազգային Իշխանութիւնը կը գումարեն նախկին Ազգային Երեսփոխան

ՄԵԼԸՆ ՊՈՒԼՂՈՒՐԾԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Օգոստոս 2014-ին:

Մ Ա Շ Ա Ջ Դ

Տիկին Անահիտ Պուլղորճեան

Տեր եւ տիկին Վաչէ եւ Սինթիա Պուլղորճեան

Տեր եւ տիկին Սարգիս եւ Մարի Սիմիթեան եւ զաւակուք

Տեր եւ տիկին Ալեքս եւ Շողիկ Տեր Գալուստեան եւ զաւակուք

Տեր եւ տիկին Յարութիւն եւ Զրիստին Պուլղորճեան եւ ընտանիք

Տիկին Սիրոհի Պուլղորճեան եւ ընտանիք

Տիար Խաչեր Մարկոսեան

Տեր եւ տիկին Մարգարէ եւ Սեդա Մարկոսեան եւ զաւակուք

Տեր եւ տիկին Յարութիւն եւ Վանուհի Մարկոսեան եւ զաւակուք

Տեր եւ տիկին Խաճակ եւ Սեդա Խաչեան եւ զաւակուք

Պուլղորճեան եւ Չալքա ընտանիքներ

Սիմիթեան եւ Խաչեան ընտանիքներ

Արզումանեան եւ Իմաստունեան ընտանիքներ

Թորիլեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գումարեն իրենց ամուսնոյն, հոր, մեծ հոր, եղբոր, հորեղբոր եւ հարազատին՝

ՄԵԼԸՆ ՊՈՒԼՂՈՒՐԾԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Օգոստոս 2014-ին, սրտի կաթոսածի հետեւանքով:

Յուրաքանչեւ արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 15 Օգոստոս 2014-ին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ուր կ'ենթանցեն մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայա ընդունիլ իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան «Զնիտք Էլ Զիամե» եկեղեցւոյ մէջ, «Ճիզը Էնտ Մերի» դպրոցին մօտ, Ռապիէլէ վեր, Պայատա շրջանին սկիզբը, մայր ճամբուն վրայ մինչեւ երեկոյեան ժամը 7:00, ինչպէս նաեւ Շաբաթ, 16 եւ Կիրակի, 17 Օգոստոսին Նոյն վայրին մէջ կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:
- **Տանօթ.** Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել ԼՕՍ-ի «Արաքսի Պուլղորճեան» ընկերաբաշխական կեդրոնին: